https://doi.org/10.53587/25792865-2022.7-52

ԱՖԵԿՏԻ ՎԻՃԱԿԻ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համբարձումյան Մ.Վ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Աֆեկտի հոգեբանության և մասնավորապես՝ իրավաբանական հոգեբանության կարևոր և արդիական խնդիրներից է համարվում դատահոգեբանական փորձաքննության շրջանակներում հետազոտման ենթակա անձանց իրադեպի պահին հուզական վիճակի փորձաքննության հիմնախնդիրը:

Վերլուծական հոդվածի նպատակն աֆեկտի վերաբերյալ առկա մասնագիտական մոտեցումների վերլուծությունն է՝ առաջնային պարամետրերից մինչև այդ վիճակի մոտեցումները: Հոդվածում ներկայացվում է աֆեկտը՝ որպես հուզական վիճակների խմբի մեջ մտնող յուրահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակի շուրջ տեսաբանների և մասնագետների մոտեցումները, աֆեկտի տեսակը, դրանց ընթացքը, իրավաբանական հանցավորական գործողությունների համատեքստում ախտաբանական մոտեցումներն աֆեկտի՝ որպես այդպիսին ճանաչման հանգամանքի վերաբերյալ, ներկայացված է դատահոգեբանական փորձաքննական հետազոտությունների շրջանակներում աֆեկտի վիճակի վերաբերյալ փորձաքննությունների առանձնահատկությունները և աֆեկտի մեկնաբանումը՝ հոգեբանության, ինչպես և իրավագիտության տեսանկյունից:

Բանալի բառեր. *աֆեկտ, ֆիզիոլոգիական աֆեկտ, կուտակային աֆեկտ, ախտաբանական աֆեկտ, հուզային աֆեկտ, աֆեկտ ալկոհոլային հարբածության ֆոնի վրա, դատահոգեբանական փորձաքննություն:*

Թեմայի արդիականությունը դատահոգեբանական փորձաքննության տեսանկյունից հիմնավորվում է նրանով, որ մեր իրականությունում հնարավոր աֆեկտի վիճակում սպանությունների, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու, ինքնասպանությունների, ինքնավնասումների դեպքերով հարուցված քրեական գործերը նշանակալի թվաքանակ է կազմում, ինչի մասին նաև խոսում է վիճակագրությունը և Փորձաքննությունների ազգային բյուրոյում համապատասխան քրեական գործերի շրջանակներում նշանակված փորձաքննությունները:

Աֆեկտ տերմինն առաջացել է լատիներեն «affectus»՝ հուզմունք բառից: Այն, ի թիվս այնպիսի հուզական վիճակների, ինչպիսիք են ֆրուստրացիան, սթրեսը, հոգեկան անհանգստությունը, հոգեկան լարվածությունը, տագնապայնությունը, վախը, զզվանքը, արհամարհանքը, կատաղությունը, հիացմունքը, երանության զգացումը և այլն, հանդիսանում է հույզերի առանձին տեսակ և բնութագրվում որպես հուզական պրոցեսում, անսանձ, գերհուզական հոգեվիճակ, հուզական բռնկում, հոգեկանի ծայրահեղ լարվածություն, անձի գիտակցության կողմից ամբողջապես չվերահսկվող, վարքավորող հոգեկանի սահմանային վիճակ՝ նմանատիպի ծագած իրավիճակին անձնային, գերհուզական հակազդման ձևերին

Թղթակցության հասցեն՝ Համբարձումյան Մանուկ Վաչիկի, հոգեբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ք. Երևան, Բաղրամյան 24,
e-mail: manuk6503@gmail.com

առաջին անդրադարձները նկատելի են դեռևս անտիկ աշխարհի և միջնադարյան մտածողների ու գործիչների մոտ, որոնք ներկայացված է ստորև:

Աֆեկտը որպես հանցագործության կատարման դեպքում մեղքը մեղմացնող և/կամ արդարացնող հանգամանք հանդիպում է դեռևս Հուստինիանոս կայսեր ժամանակների հռոմեական իրավունքում: Նման միտվածություն պահպանվել է Կառլոս Մեծի կայսրության և նրա հաջորդների քրեական օրենսդրությունում [1]:

Աֆեկտիվ վիճակների իրավական նշանակությունը նկարագրվել է քրեական իրավունքի առաջին եվրոպական աշխատանքներից մեկում՝ «Practica nova criminalis» (հրատարակված 1635 թ.-ին): Աֆեկտի հասկացությունը սկսած Ռ. Կրաֆտ-Էբինգի աշխատությունից (1898թ.), դատական հոգեբուժության և դատական հոգեբանության համատեքստում դիտարկվել է դիֆերենցիալ-ախտորոշիչ պլանում. տարբերակվում էին ֆիզիոլոգիական (նորմալ) և ախտաբանական (անոմալ) աֆեկտներ հասկացությունները [1]:

Այստեղ վերլուծության էին ենթարկվում որոշ քրեաիրավական կատեգորիաների՝ հանցավոր մտադրության առկայության, մեղսունակության-անմեղսունակության, պատասխանատվության և պատիժը մեղմացնող հանգամանքների հետ ֆիզիոլոգիական աֆեկտի հարաբերակցության հարցերը (Վ.Ֆ. Չիժ (1890թ.), Ա.Ցա. Բոտկին (1893թ.), Ռ. Կրաֆտ-Էբինգ (1898թ.), Ցա.Մ. Կալաշնիկ (1941թ.)) [1]:

Իրականացված դիտարկումները ցույց են տալիս, որ նշված հեղինակների և նրանց հաջորդների կողմից կատարվել են բավական կարևոր քայլեր. դուրս են բերվել ինչպես աֆեկտին բնորոշ հուզական հնարավոր ռեակցիաների ծագման և ընթացքի զարգացման բնորոշ եռափուլությունը (Ցա.Ա. Բոտկին (1893թ.)), այնպես էլ աֆեկտի հոգեբանական ֆենոմենոլոգիական նշանները: Զուգահեռ զարգացող ուղղությունը կարելի է սահմանել որպես ընդհանուր-հոգեբանական: Խորհրդային հոգեբանության մեջ այն ներկայացված է Ա.Ն. Լեոնտևի (1971թ.), Ն.Ի. Նաենկոյի (1976թ.), Ա.Ռ. Լուրիայի (1984թ.), Վ.Կ. Վիլյունասի (1986թ.) աշխատանքներում:

Դատահոգեբանական հետազոտություններից այս ուղղության տարբերակիչ հատկանիշը հանդիսացավ աֆեկտների հետ կապված հիմնախնդրի մշակումը՝ հույզերի սահմանման (լայն իմաստով) ընդհանուր-հոգեբանական հարցերի, զգացմունքների, հույզերի (նեղ իմաստով), տրամադրությունների, կրքերի և հուզական ոլորտի այլ կողմերի հետ աֆեկտի հարաբերակցության համատեքստում: Այս խնդրի ուսումնասիրման դեպքում առավել լայն պլանի տեսությունների օգտագործումը, առաջին հերթին՝ գործունեության տեսությունը, կանխորոշել է աֆեկտների ֆունկցիաների, գործունեության կարգավորման մեջ դրանց դերի (Ա.Ն. Լեոնտև, 1971, 2000թթ.), աֆեկտների հոգեբանական կառուցվածքի, կազմության (Վ.Կ.Վիլյունաս, 1986թ.) ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն [1]:

Դեռևս 20-րդ դարի կեսերին ընդհանուր-հոգեբանական հետազոտությունների համար որոշակիորեն բնորոշ էր նաև այն, որ դրանցում առանձնակի չէին տարբերակվում աֆեկտների տիպերը, և օրինակ՝ «կումուլյատիվ աֆեկտ», «ֆիզիոլոգիական աֆեկտ» հասկացությունների փոխարեն կիրառելի էր պարզապես աֆեկտը, իսկ վերջինս, ինչպես հայտնի է, առավել լայն իմաստով ընկալելի է որպես գերհուզական հոգեվիճակ: Ս.Լ.Ռուբինշտեյնն իր աշխատանքում աֆեկտը վերլուծության ենթարկելով (1946թ.), ներկայացնում է ցասման, զայրույթի դասական աֆեկտը, և «աֆեկտը», որը մասնակիորեն հարաբերակցվում է «հոգեկան ուժեղ լարվածություն» հասկացության հետ (քրեական օրենսդրության մեկնաբանությամբ) [1]:

Հայ հեղինակներից՝ Ա. Նալչաջյանի բնութագրմամբ աֆեկտները հույզերի այն հատուկ տեսակներն են, որոնց բնորոշ են հետևյալ հիմնական գծերը. դրանք ուժեղ հույզեր են, սկսվում են հանկարծակի, լիովին ընդգրկում են մարդուն և բուռն ընթացք ունեն [2, էջ 450]:

Աֆեկտի յուրահատկությունն այլ հուզական վիճակների համեմատ կայանում է նրանում, որ այն առաջանում է անսպասելի և համեմատաբար արագ էլ մարում է: Պետք է նշել, որ առավել երկար ձգվող հուզական վիճակները բավական ժամանակ են ընձեռում դրսևորման ընթացքում դրանք վերլուծության ենթարկելու համար, սակայն որի հնարավորությունն աֆեկտի դեպքում չկա [3, էջ 341]: Սովորաբար աֆեկտը տևում է մի քանի վայրկյան: Այն բնութագրվում է բարձր լարվածությամբ և մարդու ֆիզիոլոգիական և հոգեկան ռեսուրսների ինտենսիվ իրացմամբ [4, էջ 80]:

Աֆեկտն իրենից ներկայացնում է որպես արագ և ինտենսիվ արտահայտմամբ հուզական պայթյուն, որի համար բնութագրական է համարվում ուժգին, մոլեգին արտաքին դրսևորումը, կարճատևությունը, աֆեկտի վիճակում մարդու՝ իր վարքի նկատմամբ անպատասխանատվությունը, պարման բացությունը, այնինչ այն, որ աֆեկտն իր մեջ է ներառում անձին ամբողջությամբ՝ նրա կամքը, միտքն ու զգացմունքները, իսկ հատկապես իրավաբանական ոլորտի աշխատակիցներին՝ հորդորվում հաշվի առնել այն հանգամանքը, որ սկզբունքորեն ցանկացած հուզական վիճակ կախված իրավիճակից կարող է ուժգնանալ և ընդհուպ աֆեկտի հասնել [5, էջ 165-166]: Տարբեր հեղինակների աշխատանքներում կարելի է հանդիպել այն մտքին, որի համաձայն աֆեկտի կամային վերահսկողությունից դուրս լինելը պայմանավորված է այս հուզավիճակի դրսևորման կարճատև ժամանակային բնույթով: Հետազոտում տարբեր հեղինակների կողմից առանձնացվեցին աֆեկտի տիպերը և ներկայացվեցին յուրաքանչյուրի եռափուլ դինամիկային բնորոշ առանձնահատկությունները:

Ալկոհոլային հարբածության ֆոնին առաջացող աֆեկտը կարող է առաջ գալ ալկոհոլի ու մեծ չափաբաժնի օգտագործման հետևանքով: Նման իրավիճակի համար բնութագրական է տվյալ անձի՝ սեփական վարքի նկատմամբ վերահսկողության թուլացումը, ոչ համեղ հիշողությունների արթնացումը, վեճերը, վիրավորանքները՝ ոչ համարժեք առկա գերհուզական վիճակով պայմանավորված անձի համար նշանակալի հանդիսացող անձանց հասցեին: Այս պարագայում դեռ պետք է հաստատվի աֆեկտի առկայությունը, իսկ դրա հաստատումից հետո նաև այն հանգամանքը, որ աֆեկտի «հարուցիչը» հանդիսացել է ոչ թե ալկոհոլը, այլ անսպասելի ծագած իրավիճակը:

Աֆեկտի այս տեսակի ախտորոշումը շատ վիճահարույց է դատահոգեբանական փորձաքննության տեսանկյունից, իսկ ախտորոշման առումով՝ շատ անհատական: Օ.Դ. Սիտկովսկայան սա համարում է ֆիզիոլոգիական աֆեկտ [6]: Ի.Ա. Կուդրյավցևն ու այլ հեղինակներ սա անվանում են «անկանոն» կամ «ատիպ» աֆեկտ [7]:

Դատահոգեբանական փորձաքննության առումով կարևոր է այն, որ ալկոհոլի ազդեցության ներքո զգալիորեն փոխվում է վարքի հուզակամային կարգավորումը, իսկ անձի տիպից կախված՝ ոչ արժեքավոր կերպով կարող է բարձրանալ ինքնագնահատականը, ինքնաքննադատության մակարդակն իջնել, իրավիճակը և իրեն ուղղված խոսքն ընդունել որպես ծաղրական կամ հեգնող:

Ալկոհոլի առկայության ֆոնին ագրեսիվ-բռնարարքային գործողություններն աֆեկտ կարող են ուղեկցել այն պարագայում, երբ տվյալ անձն օգտագործած լինի չնչին չափով ալկոհոլ, իսկ հանկարծահաս խթանողությունն իր ուժգնությամբ օբյեկտիվորեն հնարավորություն չընձեռի ղեկավարել սեփական գործողությունները: Միջին կամ ծանր հարբածության ֆոնն արդեն հանում է կասկածներից հնարավոր աֆեկտի առկայության և անձի վարքի վրա դրա ազդեցության վերաբերյալ: Հատկապես աֆեկտի այս տիպն ախտորոշելու համար է հարկ ճշտել ինչպես աֆեկտի ընթացքի, այնպես էլ նախա և հետաֆեկտային վարքի դրսևորումներն այդ անձի մոտ: Աֆեկտի այս տեսակի դրսևորումները կարող են պայմանավորել այնպիսի հոգեբանական առանձնահատկություններ, ինչպիսիք են ցածր հուզական կայունությունը, ֆրուստրացիայի ցածր շեմը, սենզիտիվությունը, անհրաժեշտության դեպքում սոցիալապես թույլատրելի ձևով ագրեսիա կիրառելը և այլն [3, էջ 327]:

Ըստ Ֆ. Ս. Սաֆուանովի, ալկոհոլի որոշակի առկայությունն աֆեկտի դինամիկայի վրա ազդում է հատկապես գիտակցական հսկողության զարգացման առաջին փուլում: Հարբածությունն ազդում է սուբյեկտիվ ընկալման վրա, հանդես գալիս որպես աֆեկտի՝ առավել հեշտ ի հայտ գալու պայման [8, էջ 79]:

Ախտաբանական (պաթոլոգիկ) աֆեկտն իր բնույթով ցայտուն է, և հետադարձ ամնեզիան, որ բնորոշ է աֆեկտի ֆիզիոլոգիական տիպին, այս դեպքում ունի իր յուրահատկությունը: Հիշողության կորուստը կարող է անդառնալի լինել կապված աֆեկտ հարուցած իրադրության և դրա մանրամասների առնչությամբ կամ լինել խիստ աղճատված: Աֆեկտի այս տեսակի առանձնահատկությունն ու հիմնական տարբերությունը աֆեկտի մյուս տեսակներից կայանում է հենց երրորդ՝ ավարտական փուլի մեջ: Սա համարվում է ոչ թե սահմանային վիճակ, ինչպես դասական աֆեկտների դեպքում, այլ դրանից զգալիորեն շեղված: Ախտաբանական աֆեկտի հաստատման համար սովորաբար նշանակվում է դատահոգեբանական կամ հոգեբանահոգեբուժական փորձաքննություն: Հատկապես ախտաբանական աֆեկտի ժամանակ լետալ ավարտով բռնություն իրականացրած անձը կարող է այն աստիճան սպառվել, որ ամբողջ օրը քնի սպանվածի կողքին:

Ըստ Ի.Յու. Զավիլյանսկիի և Վ.Մ. Բլեյխերի ախտաբանական աֆեկտը բնորոշվում է նաև նրանով, որ առաջանում է կամ առանց որևէ հոգեբանական պատճառի, կամ աֆեկտ առաջ բերող հանգամանքն իր ուժով և կարևորությամբ չի համապատասխանում հակազդման ուժին և աստիճանին [9, էջ 52]:

Լ.Ա. Օստապենկոյի մոտեցման համաձայն ախտաբանական աֆեկտը բերում է գիտակցական խորը շփոթի, ինքնաբուխ, աննպատակ, վտանգավոր գործողությունների, հարձակումների: Ի տարբերություն ֆիզիոլոգիական աֆեկտի, որի դեպքում գիտակցությունն ամբողջությամբ չի անհետանում, այլ նեղանում է, այս դեպքում այն լրիվին ապաակտիվանում է և մթագնում [10, էջ 9]: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տեսակետը կիսում են շատ հեղինակներ:

Ըստ Լ.Մ. Բալաբանովայի ախտաբանական աֆեկտը ֆիզիոլոգիականի պես առաջ է գալիս հոգեվնասվածքի (հոգետրավմայի) արդյունքում, բայց դրանից տարբերվում է նրանով, որ ուղեկցվում է ոչ ադեկվատ, ցնորային, հալյուցինացիոն դրսևորումներով, և վերջինիս դեպքում է, որ իրադրության զոհին հասցվում են ամենածանր վնասվածքները: Ախտաբանական աֆեկտի տևողությունը հաշվվում է րոպեներով և ավարտվում ուժասպառությամբ, վեգետատիվ համակարգի խանգարումներով: Բռնարարն ամենից հաճախ համարվում է անմեղսունակ իր կատարած իրավախախտման համար [11, էջ 206]:

Կ.Վարդանյանը պաթոլոգիկ աֆեկտը բնորոշում է որպես կարճատև սուր հոգեկան խանգարում. այն առաջանում է ոչ թերարժեք նյարդային համակարգ ունեցողների մոտ: Թույլ ախտածին գործոնը (որին առողջ մարդը որևէ ռեակցիա չէր տա) բուռն ռեակցիայի հանկարծակի առաջ գալու պատճառ է դառնում [12, էջ 327]:

Յու. Անտոնյանն ու Վ.Վ. Գուլդանը նշում են, որ իրավախախտման պահին աֆեկտիվ ռեակցիան կարող է առաջ գալ ինչպես հոգեպես առողջ մարդու, այնպես էլ հոգեկանի տարբեր խանգարումներ ունեցող մարդկանց մոտ և երկու դեպքում էլ հասնել մեծ ինտենսիվության՝ դրանով հանդերձ պահպանելով ֆիզիոլոգիական աֆեկտին բնորոշ առանձնահատկությունները կամ էլ՝ կրել ախտաբանականի դրսևորում [13, էջ 227]:

Օ.Դ. Սիտկովսկայան առաջարկում է առանձնացնել աֆեկտի ֆիզիոլոգիական և ախտաբանական խմբի մեջ մտնող տեսակներից ևս մեկը՝ **ֆիզիոլոգիական աֆեկտ ախտաբանական հողի վրա** առաջ եկած միջանկյալ խումբ, որը, որպես կանոն, հանդիպում է ալկոհոլիզմ ունեցող անձանց, պսիխոպատների (հոգեհիվանդների), բնավորության հիստերոիդ շեշտվածության մեջ, հոգեկան որոշ շեղումներով, բայց մեղսունակ անձանց մոտ: Այսպիսի տարբերակման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ այս անձինք նորմայի սահմաններում գտնվելով հանդերձ, ոչ միշտ կարող են գիտակցել իրենց արարքների նշանակությունն ու ղեկավարել դրանք [14, էջ 28]: Եթե ֆիզիոլոգիական աֆեկտի համար բնորոշ է կատարած արարքների համար զղջումը, ապա ախտաբանականի դեպքում սա գրեթե չի դիտվում: Հատկանշական է, որ որպես կանոն ախտաբանական աֆեկտի առկայության վերաբերյալ հարցերն ուղղվում են հոգեբույժ մասնագետներին:

Կումուլյատիվ աֆեկտի համար բնորոշ է տևական ժամանակի ընթացքում բացասական հույզերի, ապրումների շարունակական կուտակումը, որը կարող է ձգվել շաբաթներ, ամիսներ, տարիներ: Այս ողջ ժամանակահատվածում տեղի ունեցած դեպքերի արդյունքում հուզական լարվածությունը աֆեկտիվ պայթյունի ժամանակ հասնում է իր բարձրակետին, որին նախորդում են հոգետրավմատիկ իրադրության առաջացումը և զարգացումը [8, էջ 78]:

Կումուլյատիվ աֆեկտի առաջին փուլը հաճախ ընթանում է, այսպես կոչված, «ձնագնդի մեխանիզմով», այսինքն՝ հոգեվնասվածքային իրավիճակը, ժամանակի ընթացքում կուտակվելով, նպաստում է հուզական լարվածության աճին: Կումուլյատիվ աֆեկտի երկրորդ և երրորդ փուլերը սկզբունքորեն չեն տարբերվում ֆիզիոլոգիական աֆեկտից [15, էջ 32]:

Առաջին հայացքից ոչ մեծ նշանակության չնչին միջադեպը, անհաջող, հեգնական կատակը, հերթական ծաղրը կամ հայհոյանքը կարող է կատարել վերջին կաթիլի դերը և անձին մղել գիտակցական վերահսկողությանն ամբողջովին չենթարկվող քայլերի: Կումուլյատիվ աֆեկտի ավարտի փուլում ևս նկատվում է հուզական էներգիայի սպառում:

Կյանքին վտանգ սպառնացող, հոգեկան անհարմարավետության, միօրինակ, միապաղաղ առօրյայի հետևանքով կուտակված բացասական հուզական գրգռիչներն իրենց ուրույն տեղն են ունենում կումուլյատիվ աֆեկտի դրսևորման մեջ և հաճախ ուղղակիորեն պայմանավորում են դրա դրսևորումը: Ըստ Ի.Ա. Կուդրյավցևի և այլոց, կումուլյատիվ աֆեկտը հաճախակի առաջանում է բարձր փոխհատուցող բնույթի ինքնավերահսկողությամբ օժտված, դյուրագրգիռ, խցանվող, արգելակվող տիպի մարդկանց մոտ, որոնք հակված չեն անմիջապես պատասխան տալու առաջացած ազդակներին [16, էջ 11]:

Ինչպես նշվում է շատ հեղինակների մոտ (Է. Գրին, Ֆ. Սաֆոնով, Ի.Ա. Կուդրյավցև և այլք) աֆեկտիվ պայթյունը կարող է վրա հասնել ամենաաննշան առիթներով, որոնք կարող են լինել ինչպես իրական, այնպես էլ՝ երևակայական: Աֆեկտի այս տեսակի դրսևորումից առաջ անձի մոտ կարող են լինել հոգեկան ծանր ապրումներ, նևրոտիկ բնույթի ռեակցիաներ, իսկ ինտոքսիկացիայի առկայությունը՝ լրացուցիչ նպաստող հանգամանք կարող է հանդիսանալ կումուլյատիվ աֆեկտի առաջացման և դրսևորման համար. միջադեպին կարող են նախորդել հուսահատական վիճակները, տրամադրության չհիմնավորված անկումները, հուսալքությունը:

Ըստ Ենչկոյի **ֆիզիոլոգիական աֆեկտ** տերմինի առաջացումը սկզբում պայմանավորված էր իրավաբանական տեսանկյունից պատժելի և ոչ պատժելի աֆեկտների միջև տարբերությունն ընդգծելու համար [17, էջ 25]: Ըստ շատ հեղինակների, ֆիզիոլոգիական աֆեկտի համար ի տարբերություն ախտաբանականի, բնորոշ է միայն գիտակցության նեղացումը և ոչ կատարյալ մթագնումը: Սա համարվում է աֆեկտի դասական ձև և աֆեկտի այլ տեսակների հետ համեմատած ունի իր տարբերությունները. առաջին փուլը, լինելով ակնթարթային, բնութագրվում է դրսևորման մեծ արագությամբ: Հետադարձ ամնեզիայի առումով անձը կարող է հիշել միայն աֆեկտիվ պայթյունին հաջորդող իրադրության մանրամասները: Սա ուղեկցվում է հոգեկան գործունեության կտրուկ փոփոխություններով, օրգանիզմի շարժողական, էնդոկրին, վեգետատիվ նյարդային համակարգերի գործունեության փոփոխություններով [3, էջ 324]:

Աֆեկտի լարվածության կուտակման առաջին փուլը բնորոշվում է իրավիճակի անելանելի լինելու սուբյեկտիվ զգացողությամբ, աֆեկտիվ պայթյունի առումով սուբյեկտիվ անսպասելիության գործոնով [8, էջ 78]: Ժամանակի սղությամբ պայմանավորված օբյեկտիվորեն հնարավոր չի լինում ադապտացիոն մեխանիզմների գործադրումն իրադրությանը համապատասխան: Ըստ Վ.Լ. Վասիլևի այստեղ ուրույն տեղ ունի տվյալ անձի՝ իրեն ուղղված վիրավորանքներին պատասխանելու կարողությունը, զգայունությունը, իրադրությանը հարմարվելու ոչ բավարար ճկունությունը [18, էջ 509]:

Աֆեկտիվ պայթյունի երկրորդ փուլը բնորոշվում է 2 հիմնական հատկանիշներով՝ գիտակցության մասնակի նեղացմամբ, գործունեության միջնորդավորվածության կորստով, շարժողական կարծրատիպությամբ [3, էջ 325]: Աչքերի լցված լինելը, խոսքի խանգարումները, դեմքի կարմրությունը կամ սփրթնելը բավականաչափ են բնութագրում աֆեկտի այս տիպի երկրորդ փուլում գտնվող անձի արտաքին տեսքը:

Աֆեկտի հյուծման՝ երրորդ փուլի համար բնորոշ կարող են լինել ասթենիայի դրսևորումները, ինչպիսիք են՝ ուժասպառությունը, հոգեկան և ֆիզիկական ապատիան, անհաղթահարելի քնկոտությունը, սրտխառնոցը, գլխապտույտը, ջլատվածությունը, իր էությամբ ասթենոդեպրեսիվ դրսևորումները:

Այսպիսով, որպես ամփոփում հատկանշական է, որ աֆեկտիվ հակազդման համար հիմք կարող է հանդիսանալ անձնային և իրադրային գործոնների համադրումը:

Ֆիզիոլոգիական դրսևորումներին անդրադառնալով հարկ է նշել, որ դրանք կարող են տարբեր լինել, մեկի դեպքում կարող է ակտիվանալ արյան հոսքը դեպի մարմնի պերիֆերիկ հատվածներ, որոնց հետևանքով՝ կարող է բարձրանալ արյան զարկերակային ճնշումը, կարծել ռիթմը, առաջ գալ նախաինֆարկտային վիճակ, մյուս դեպքում՝ արյան զարկերակային ճնշումը կարող է կտրուկ իջնել, դեմքը սփրթնել։

Հետքային աֆեկտի ախտորոշման առումով, մասնավորապես՝ հոգեբանական փորձաքննության ժամանակ, հարկ է հաշվի առնել իրավիճակի, հանկարծական վտանգի, հոգեմաշող իրադրության սուբյեկտիվ ընկալման պահը։ Այստեղ հատկանշականն այն է, որ աֆեկտ առաջացնող հենքը, որը պայմանավորում է նաև միջադեպը, կարող է եղած լինել տևական ժամանակահատված առաջ, ասոցիատիվ կապ առաջացնող իրադրությունը՝ տարիներ անց։ Վերջինս արթնացնում է հոգեկանում խորը նստած հենքը, առաջացնում բուռն հակազդում։ Հաջորդ իրավիճակը կարծես նախկին իրադրության մոդելավորումը լինի և ամենևին պարտադիր չէ, որ առնչվի այն անձին, ով եղել է աֆեկտիվ հենքի առաջացման «մեղավորը»։

Ա.Ն. Լեոնտևը նշում է, որ աֆեկտի կարգավորող ֆունկցիան կայանում է աֆեկտիվ, հոգեկան տրավմա ձևավորված հետքերի առաջացման մեջ, որոնք հետագայում պայմանավորում և սահմանափակում են նմանատիպ իրադրության առաջ գալու հետ մեկտեղ տվյալ անձի վարքի ընտրողականությունն ու իրադրության մեջ կողմնորոշվելու կարողությունը [19, էջ 9]։ Աֆեկտի այս տեսակի առաջացման համար, ըստ էության, բնորոշ է հոգեբանական պրոյեկցիայի մեխանիզմը, և իրենց բնույթով տվյալ անձի համար խոցելի ու «ցավոտ», բացասական հիշողությունների, հետքերի կրկնությունը։ Աֆեկտի այս տիպի դեպքում անձն ունենում է "դեժավյուի" զգացում՝ նեգատիվ իրավիճակի մասին հուշերի վերարթնացման տեսքով։

Կոչենովի և այլոց կարծիքով նախկինում ապրած հույզերի թողած հետքերի աշխուժացումն իր ուժգնությամբ արտահայտման ձևով կարող են գերազանցել նախկինում ապրած հույզերը, դրանց տրված հակազդումները [3, էջ 329]։ Հետքային աֆեկտի մարման փուլում հսարավոր պատասխանատվության ենթարկվելը կատարած հանցավորական քայլերի համար դեռևս չի գիտակցվում և դրանից խույս տալու նախաձեռնողական քայլեր սովորաբար չեն արվում։

Այսպիսով, վերլուծության ենթարկվեցին տարբեր ժամանակների նշանավոր հեղինակների աշխատություններից վերցված աֆեկտի վերաբերյալ կարևոր մոտեցումները։ Ստորև ներկայացվում է կատարված վերլուծության ամփոփումը.

- Ոչ անտակ աֆեկտի բնութագիծերից մեկն այն է, որ այդ վիճակին և դրան հաջորդող գործողություններին, որպես կանոն, բնորոշ է զրցումը։ Սա բացատրվում է նրանով, որ աֆեկտի ազդեցության տակ կատարված գործողությունները չեն լինում նախապես մտածված և չեն համարվում կանխամտածված գործողություններ։
- Ենթադրվում է, որ անձի համար կենսական որոշ պահանջմունքների (հանգիստ, քուն և այլն) բավարարման անընդհատ հետաձգումը նս ինչ-որ առումով պայմանավորում է աֆեկտիվ հակազդումների առաջ գալը՝ ի պատասխան բացասական գրգռիչների։
- Աֆեկտի առկայությունն ըստ էության մարդու գիտակցության մեջ և օրգանիզմում առաջ է բերում այնպիսի հոգեֆիզիոլոգիական փոփոխություններ, որոնց արդյունքում գիտակցության նեղացումը կամ դրա կատարյալ մթագնումն ու սեփական վարքի և դրանից ածանցվող գործողությունների հանդեպ ինքնավերահսկողությունը վերանում է։

Այսուհանդերձ, դատահոգեբանական փորձաքննության շրջանակում յուրաքանչյուր առանձին դեպքում տուժողի կողմից գործադրված բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաիրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության) կամ պարբերաբար դրսևորված հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծին ի պատասխան առաջացած աֆեկտի վիճակում գտնվող անձի իրականացրած հակաիրավական գործողության վերաբերյալ առաջադրված հարցին տրվող պատասխանում գերիշխող պատճառականության խնդիրը լիովությամբ և բազմակողմանիորեն դիտարկելու, յուրաքանչյուր առանձին դեպքում հոգեբանական պատճառականության ուսումնասիրության, աֆեկտի վիճակի զարգացման ընթացքում և դրան նախորդող աֆեկտոգեն ազդակների համահարաբերակցության հանգամանալիորեն և նորովի մոտենալու անհրաժեշտություն կա:

Գրականության ցանկ

1. https://law.wikireading.ru/71260
2. Ա.Ա. Նալչաջյան, «Հոգեբանության հիմունքները»: «Հոգեբան» հր., Ե. 1997, 648 էջ:
3. Ա.Ց. Արզումանյան, Է.Ա. Գրիև, «Իրավաբանական հոգեբանություն»: «Զանգակ-97», Եր., 2004., 432 էջ:
4. Ռ. Աղուզումցյան, Ա. Պապայացյան Ա., Վ. Մեջոնյան, «Իրավաբանական հոգեբանություն», ուսումնական ձեռնարկ, Ե., «Աստղիկ», 2003թ., 136 էջ:
5. Чуфаровский Ю.В. "Юридическая психология". Изд. "ПРОСПЕКТ", М. 2016, 472 с.
6. Ситковская О.Д. "Аффект: криминально-психологическое исследование" М., "Юрлитинформ", 2001, 240 с.
7. Кудрявцев И. А, Сафуанов Ф. С., Голев А. С., "Нарушение поведения лиц в состоянии алкогольного опьянения: психологические механизмы и правовые аспекты профилактики", Психологический журнал. 1982, # 5, стр. 75-87.
8. Сафуанов Ф. "Судебно-психологическая экспертиза в уголовном процессе". М. 1998, 118с.
9. Завилянский И., Блейхер В. "Психиатрический диагноз". Киев: Вища школа, 1979, 200с.
10. Остапенко Л.А. "Уголовно-правовая характеристика умышленных убийств при смягчающих обстоятельствах. Автореф. дис. на соискание ученой степени кандидата юридических наук": 12.00.08 "Уголовное право и криминология, уголовно-исполнительное право", Л.А. Остапенко, Киев, 2003, 17с.
11. Балабанова Л. М. "Судебная патопсихология. Вопросы определения нормы и отклонения". Изд. "Сталкер" М., 1998, 432 с.
12. Վարդանյան Կ.Է., «Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուբյեկտիվ վարքի պատճառականության շղթայում» (Կրիմինալային հոգեբանական նկարագիրը): «Դաֆթե բաղալյան» հր., Ե., 2008, 360 էջ:
13. Антонян Ю.М., Гульдан В. В. "КРИМИНАЛЬНАЯ ПАТОПСИХОЛОГИЯ" Изд. "Наука", М., 1991, 248 с.
14. Ситковская О.Д., "Судебно психологическая экспертиза", Методологическое пособие, М. 1983.
15. Գրիև Է.: «ԱՖԵԿՏ», «Զանգակ-97», Եր.: 2017, 112 էջ:
16. Кудрявцев И.А, Лавринович А.Н., Сафуанов Ф.С., Ерохина М.Б. "Некоторые клинические особенности и психологические механизмы регуляции поведения у психопатических личностей в состояниях эмоциональной напряженности. Кратковременные психотические состояния. М., 1983".

17. Шишков С. "Установление внезапно возникшего сильного душевного волнения (аффекта)"//Законность, №11, 2002, 25с.
18. Васильев В.Л. "Юридическая психология". Изд. "ПИТЕР", М., 2010, 608 с.
19. Леонтьев А.Н. "Потребности, мотивы, эмоции". М., 1971.

ОСОБЕННОСТИ СОСТОЯНИЯ АФФЕКТА В СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ

Амбарцумян М.В.

Одним из актуальных вопросов современной психологии, в частности юридической психологии, является вопрос исследования аффекта (состояния сильного психического возбуждения) в рамках судебно-психологической экспертизы.

Целью аналитической статьи является анализ существующих профессиональных подходов к аффекту, от первичных представлений до актуальных научных подходов. В статье представлены подходы теоретиков-специалистов к своеобразному психофизиологическому состоянию аффекта, как к группе эмоционального состояния, видам аффекта, их протеканию, исходным подходам в контексте противоправных действий смягчающих обстоятельств наказание, а также особенности исследования состояние аффекта в рамках современных судебно-психологических экспертиз и трактовка аффекта с позиций психологии и юриспруденции.

Ключевые слова: *аффект, физиологический аффект, кумулятивный аффект, патологический аффект, следовой аффект, аффект на фоне алкогольного опьянения, судебно-психологическая экспертиза.*

PECULIARITIES OF THE STATE OF AFFECT IN FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE

Hambardzumyan M.

One of the topical issues of modern psychology, in particular legal psychology, is the question of the study of affect (a state of strong mental arousal) to be investigated in the framework of forensic psychological expertise. The purpose of the analytical article is to analyze the existing professional approaches to affect, from primary ideas to current scientific approaches.

The article presents the approaches of specialist theorists to a peculiar psychophysiological state of affect as a group of emotional states, types of affect, their course, initial approaches in the context of illegal actions as a mitigating circumstance as a punishment, as well as features of the study of the state of affect in the framework of modern forensic psychological examinations and interpretation of affect from the positions of psychology and jurisprudence.

Keywords: *affect, physiological affect, cumulative effect, pathological affect, trace affect, effect on the background of alcohol intoxication, forensic psychological experti*

Ներկայացվել է խմբագրություն 10.02.2022
Ընդունվել է տպագրության 19.06.2022